շատակարանի մէջ «հոգևոր որդեակն մեր Յո՞հնէս եպ՞ս ՚ածարՙնկ ս՞ր ուխտիս» (Մեծոփայ) է անուանում։ Նա Թովմայի հետ մասնակից էր 1441 թուի ժողովին։ Յովհաննէս եպիսկոպոսին յիշում են Ղազար գրիչ ՊՀԶ (=1427) և Ներսէս գրիչ ՊԶԹ (=1440) թուերին*։ Առաջինը պարզ յայտնում է, թէ նա Թովմայի աշակերտն է։ Վարդապետ աշակերտներից Թովման յիշում է «զաշկ՞տլ եղբ՞ր զՍ՞փս վ՞դտ, զԱտոմ վ՞դտ, զՀաքարէ վ՞դտ, որ կան յաշխատութ՞ի ՚ածաշունչ տառից»։ Նոյն վարդապետներից ոմանք յիշուած են և մի երկրորդ յիշատակարանի մէջ**։ Այդ վարդապետների թուումն է և Կիրակոս բանասէրը, որ իւր ուսուցչի կենսագրութիւնը գրեց։ Թովման ՊԶԴ (=1435) թուականի յիշատակարանի մէջ յիշում է ոմն Կիրակոսի, արդեօք նոյն է սա Կիրակոս վարդապետի հետ. անհաւանական չէ, թէև պնդել չենք կարող***։ Մեռած աշակերտների թուում Թովման յիշում է Մկրտիչ վարդապետ Հիւսան, Ղազար, Մեսրոպ, Յովհաննէս Բաղիշեցի. «որ տարաժ՞մ մահուամբ փոխե՞ցն և ելին ի դառն կեն՞ցս և Յ՞ոհս ք՞հ եղբայր մեր։ Եւ սուգ անմխիթար թ՞ղին մեզ, զի ի զուրն եղև աշխ՞տու՞ի մեր վասն մեղաց մերոց»†։

Գրիչ աշակերտներից են, բացի վերոյիշեալ Ղազարից, որ Մեծոփայ վանքում գրած Ժամագրքի և Պատարագամատոյցի յիշատակարանում խնդրում է յիշել «զԹումա վարդապետն, որ զգիրս ուսոյց»†† և Յակոբ դպիր և Յովհաննէս կրօնաւոր, «որ բաղում աշխատու՞ր և չ՞չրնաւք օ՞գնկն եղեն ինձ ի գրելս» (№ 2103/2065 Զ–ը)։ Յովհաննէս կրօնաւորը Կարապետ քահանայի որդին է†††։ Նոյն տեղը յիշւում է «Յովհաննէս գրագիր գրոց աշակերտ»։ ՊՀԶ թուականին Թովման Ասպիսնակ գիւղում գտած Իգնատիոսի Ղուկասու մեկնութիւնը օրինակել է տալիս «հոգևոր որդոց իմոց Թովմայ գրագրի և Յովհաննէս գրոց աշակերտի», որ անշուշտ նոյն է նախընթացի հետ։ Հաւանօրէն այս Յովհաննէսն է որդի Յակոբ քահանայի և Սալչուկ խաթունի, որ ՊԶԳ (=1434) թուին, դեռ ևս սարկաւագ, գրել է մի Մաշտոց, ՊՂԲ

---

* Անդ· 765· 765· (26· 28)։ Տաշեան. Ցուցակ· 880·

** Նոր Նիւթեր· Ար· 759· 765· (22· 28)։

*** Անդ· 764· (27)։ Մեր Մատ· № 1406/1382 Ձեռագրում· 508բ· խոշոր եւ անկանոն շեղագրով ոմն «Կիրակոս բանասէր» գրել է Սքանդարի, Շահուռնի եւ Զհանշահի արշաւանքների տարեթուերը. հաւանօրէն նոյն է մեր Կիրակոսի հետ։

† Նոր Նիւթեր· 759· (22)։

†† Տաշեան Ցուցակ· 880·

††† Նոր Նիւթեր· Ար· 756· 764· (19· 27)։